ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ

***ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքներ***

# ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000508, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

ՏՐՎԱԾ Է

2024-09-04, «ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ

ՀՀ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՆՈՐԱՏՈՒՍ, ՆՈՐԱՏՈՒՍ, Գ.ՆՈՐԱՏՈՒՍ, --

Գործողության ժամկետը՝ 04.09.2029թ.

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG19-54B6-AFFB-2FEA

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ԵՐԵՎԱՆ 2026

***ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքներ***

# ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏ

«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Դ. Հովսեփյան

Նախագծի գլխավոր ինժեներ Մ. Ալեքսանյան

**ԵՐԵՎԱՆ 2026**

Հաստատում եմ՝

Արզնի համայնքի ղեկավար

------------------ Ֆ. ՄԻՐԶՈԵՎ

**Թերությունների ակտ**

*Ք. Արզնի*

*Հանձնաժողովը հետևյալ կազմով՝ Արզնի համայնքի ներկայացուցիչ Է. Աֆյան և «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի նախագծող Ս. Ալեքսանյանը, ուսումնասիրեցին Արզնի համայնքի փողոցների երթևեկելի մասի փոսային նորոգման աշխատանքների ծավալները:*

*Ուստի ասիրվել է Արզնի համայնքի №I, II, III, IV,V, VI, VII, VIII, IX, X, XIIIև XV փողոցների երթևեկելի մասի առկա վիճակը:*

*Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ փողոցների ա/բ ծածկի վրա առկա են փոսեր և ցանցավոր ճաքեր:*

*Անվտանգ և անխափան երթևեկություն ապահովելու համար անհրաժեշտություն է առաջացել վերանորոգել վերոնշյալ հատվածները:*

*Նախատեսվում է իրականացնել հետևյալ շին աշխատանքները.*

- *փոսային նորոգում h=3-5 սմ – 540մ²*
- *փոսային նորոգում հիմքով – 520մ²*
  - *մանրահատիկ ա/բ h=5 սմ*
  - *խճային հիմք h ք=(8-16)սմ բիտում տարածումով 4-12տ/1000մ²*

-------------------- *Է. Աֆյան*

-------------------- *Ս. Ալեքսանյան*

Բացատրագիր

*Առաջադրանքով նախատեսված է իրականացնել Արզնի համայնքի Արզնի համայնքի փողոցների ա/բ ծածկի փոսային նորոգման աշխատանքների նախագծում։*

*Ուսումնասիրությունից հետո պարզ դարձավ, որ փողոցների ա/բ ծածկի վրա առկա են երթևեկությունը խոչընդոտող փոսեր և ճաքեր, քայքայված հատվածներ։ Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.*

1. *Ա/բ ծածկի փոսային նորոգում h=3-5սմ*
2. *Ա/բ ծածկի փոսային նորոգում հիմքով. խճային հիմքի իրականացում h=8-16սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ², մանրահատիկ ա/բ h=5սմ*

***Շինարարական աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովում***

*Շինհրապարակը պետք է կահավորված լինի հակահրդեհային միջոցներով և բժշկական առաջին օգնության պարագաներով։ Այն դեպքում երբ շինարարական աշխատանքները իրականացվում են գիշերային պայմաններում կապալառուն պետք է ապահովի շինհրապարակի և աշխատանքների կատարման վայրի համապատասխան լուսավորությունը։*

*Շինարարության ժամանակ հաշվի առնել գոյություն ունեցող կոմունիկացիաները (գազատար, ջրատար խողովակաշարերը, կապի և էլեկտրո մալուխները), տեղյակ պահելով համապատասխան կազմակերպություններին։*

***Շրջակա միջավայրի պահպանում***

*Շինարարության ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շրջակա միջավայրի վրա։ Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել շրջակա տարածքը ավելորդ գրունտից և շին. աղբից, նրանց բեռնումով և տեղափոխումով լցակույտ։*

*Շինարարության ժամանակ պետք է պահպանել հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.*

*ՇՆ և Կ III – 4.80 «Աշխատանքի անվտանգությունը շինարարությունում»*

*ՇՆ և Կ III – 1.76 «Շինարարական արտադրության կազմակերպում»։*

## Փոսային նորոգման հատված
## Հատակագիծ




1. Եզրային փոսեր
2. Առանձին փոսեր
3. Համատարած փոսեր
4. Մշակվող ուրվագիծ

Գոյություն ունեցող ծածկի փոսային նորոգում




## ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՈՒՄ

Փոսային նորոգումները պետք է կատարվեն տաք ասֆալտբետոնե խառնուրդներով:

Նորոգման աշխատանքները կազմակերպվում են չոր եղանակներին, իսկ խոնավ եղանակին վերանորոգվող հատվածները պետք է անպայման չորացվեն:



Ասֆալտբետոնային պատվածքի նորոգման ենթակա տեղերը կավիճով եզրագծվում են ճանապարհի առանցքին ուղղահայաց և զուգահեռ գծերով, այնպես, որ նրանք ընդգրկեն ծածկի չքայքայված հատվածը 3-5 սմ լայնությամբ:Ստացվում են "արկղեր", որոնք մաքրվում են շինանյութերի մնացորդներից և փոշուց մետաղական խոզանակներով և օդափչման միջոցով:

Կտրված տեղերը, պատերը և հատակը պատվում են օրգանական կապակցող նյութերով՝ բիտումով:

Տեղադրվում է ասֆալտբետոնե խառնուրդը (պահպանելով ջերմաստիճանը 120°C), հարթեցվում մակերեսը, կատարվում խտացում՝ սկզբում թեթև, հետո ծանր գլդոններով (խտացումը կատարվում է կողքից կենտրոն):

ա) Փոսային նորոգում h=3÷5սմ; h=5÷12սմ մանրահատիկ ա/բ

բ) Փոսային նորոգում խճային հիմքով մանրահատիկ ա/բ h=5սմ խճային հիմք h=8÷16սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքներ |
| ՆԳՃ | Մ. Ալեքսանյան | [signature] | | |

| Փոսային նորոգման տիպային կոնստրուկցիա | Փուլ | Թերթ | Թերթեր |
|---|---|---|---|
| | ԱՆ | 1 | 1 |

<<ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ >> ՍՊԸ

2025

# ՀԱՄԱՀԱՎԱՔ ԱՄՓՈՓԱԳԻՐ

## ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքներ

| N/N | Աշխատանքների անվանումը | Չափման միավոր | Ծավալը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | ***I. Երթևեկելի մաս*** | | | |
| 1 | Փոսային նորոգում h=3-5սմ | $մ^2$ | 540 | |
| 2 | Փոսային նորոգում հիմքով.<br>- խիճ h=8-16սմ բիտումի տարածումով 4,12տ/1000$մ^2$<br>- մանրահատիկ ա/բ h=5սմ | $մ^2$ | 520 | |

***Կազմեց՝*** ***Մ. Ալեքսանյան***